



## ՎԱԼԵՐԻ ՄԻՌԶՈՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի պրոֆեսոր,  
փիլիսոփայական գիտությունների դոկտոր

### «ՀԱՂԹԱՆԱԿ – ՀԱՂԹԱՆԱԿ» ՍԿԶԲՈՒՆՔԸ ԿԱՌԱՎԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ XXI ԴԱՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑՑՈՒՄ

Հողվածում քննարկվում են կառավարաբանության XXI դարի հարացույցի հիմնական փոփոխությունները: Դրանք մեկնաբանվում են մի կողմից՝ որպես գիտության մերժին տրամադրությամբ թեատրվող գոյացություններ, կառավարման խնդիրների տեսական զարգացման արգասիք, մյուս կողմից՝ որպես ժամանակակից կազմակերպությունների գործառության արտաքին և ներքին միջավայրերում նոր իրողությունների ազդեցություն բուն կառավարման ընթացքի վրա:

**Հիմնաբառեր.** կառավարաբանություն, հարացույց, XXI դար, գործարար հաղորդակցում, «հաղթանակ–պարտություն», «հաղթանակ–հաղթանակ», փոխադարձ վստահություն, փոխադարձ զիջում  
JEL: A11, M14, Z19

Հանգանանորեն քննարկելով ֆիզիկայում կատարված հերթական հեղաշրջնան՝ դասական (նյուտոնյան) ֆիզիկայից քվանտային ֆիզիկային անցման, մասնավորապես՝ մեխանիստական աշխարհայացքի հաղթահարման ընթացքը, Ալբերտ Էյնշտեյնը և Լեոպոլդ Ինֆելդը ընդհանուր մի ամփոփում են կատարում. «Գիտությունը ամենակին էլ օրենքների հավաքածու չէ, անկապ փաստերի ժողովածու չէ: Այն մարդկային մտածողության ստեղծագործություններով: Ֆիզիկական տեսությունները ծգտում են կազմել իրականության պատկերը և գտնել նրա ու զգայական ընկալումների ընդարձակ աշխարհի միջև եղած կապը.... Յուրաքանչյուր կարևոր նվաճում նոր հարցեր է բերում:

Ամեն մի զարգացում ժամանակի ընթացքում նոր և ավելի խորը դժվարություններ է բացահայտում»<sup>1</sup>: Ասվածն արդարացի է բոլոր գիտությունների, այդ թվում՝ կառավարաբանության համար: Դրանում համոզվում ենք՝ դիտարկելով կառավարման գիտության հարացույցի էվոլյուցիան՝ «գիտական կառավարման» դպրոցի ձևավորումից մինչև XXI դարի սկիզբ:

«Գիտություն» երևույթին դժվար է ընդհանրական սահմանում տալը: Կարող ենք ասել, թերևս, որ գիտությունը մշտապես զարգացող գիտելիքի համակարգ է: Եվ տվյալ գիտական հանրույթի անդամները հայտնաբերում, արձանագրում և կուտակում են նորանոր փաստեր, որոնք միշտ չեն, որ բացատրվում են եղած տեսություններով: Ուստի և գիտնականներն առաջ են քաշում վարկածներ, տպիս նոր բացատրություններ, որոնց հիման վրա էլ ձևակերպում են նոր օրինաչափություններ, որոնք արդեն չեն համապատասխանում առևկա հարացույցի հիմնադրույթներին և, վերջիվերջո, արմատապես փոխում են այդ հարացույցը՝ արտամղում նոր հարացույցով: Վերջինս, սակայն, դժվարությամբ է ձանապարհ բացում. հիմնական պատճառը հին հարացույցն է, որի տիրապետության դեպքում նոր փաստերը հաճախ չեն ընկալվում, քանի որ փորձ է արվում դրանք անպայման հնով բացատրելու: Այս կանխակալ մոտեցումը, իհարկե, ոչ թե ինքնին կայացած հարացույցի, այլ դրանով առաջնորդվողների ոչ ձկուն, քարացած մտածելակերպի հետևանքն է: Գոյանում է ձգնաժամ, իսկ դրա հաղթահարումը, այսինքն՝ մի հարացույցից անցումը մյուսին ընդունված է բնորոշել որպես «գիտական հեղափոխություն», որի կարուցվածքը հանգանանորեն պարզաբանել է Թոմաս Կունը<sup>2</sup>: Եվ, ինչպես նշում է նա, «հասկապես ձգնաժամի գիտակցման փուլում է, որ գիտնականները դիմում են փիլիսոփայական վերլուծությանը՝ որպես իրենց բնագավառում առեղջվածների բացահայտման միջոցի»<sup>3</sup>:

«Հարացույց» հասկացության տարրեր մեկնաբանություններ կան: Օրինակ՝ Սթիվեն Բովին այդպիսին է համարում «կոռորդինատների այն համակարգը, որ մարդն օգտագործում է իրականության տարրեր կողմերը ըմբռնելու և բացատրելու համար»<sup>4</sup>: Սրան ննան է Ուչարդ Շավի ձևակերպումը. ««Հարացույց» ասելով հասկանում ենք մտածողության, աշխարհի ընկալման և ըմբռնման հիմնարար եղանակը»<sup>5</sup>: Վերոբերյալ դատողությունների լույսով՝ առաջարկենք հետևյալ սահմանումը. հարացույցը որոշակի ժամանակաշրջանում տվյալ գիտական հանրույթի համար առավել ընդունելի կանխադրույթների ամբողջություն է, որն այդ գիտության սապարեզում ծառայում է որպես հիմնախնդիրների ըմբռնման և լուծնան ընդհանուր մեթոդաբանական հիմք:

Ինչպես բոլոր գիտություններում, կառավարաբանության պարագայուն նույնականություններում գիտելիքի, կարծիքների, հայեցակարգերի կուտակումը ինքնին անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է տվյալ գիտության վերջնական կա-

<sup>1</sup> Ա. Էնշտեյն, Լ. Խնֆիլդ, Ֆիզիկայի էվոլյուցիան, Եր., «Հայաստան», 1968, էջ 285, 287:

<sup>2</sup> Տե՛ս Կүհ Տ., Структура научных революций / Пер. с англ., М., “Прогресс”, 1977:

<sup>3</sup> Անդ, էջ 123: Թ. Կունի մտքի շարունակությունը գիտության և փիլիսոփայության փոխհարաբերությունների վերաբերյալ շատ հաջող մի ձևակերպում է. «Գիտնականները, ընդհանուր առմամբ, պարտավոր չեն և չեն ցանկանում փիլիսոփա լինել. ինոր, բնականն զարգացող գիտությունը սովորաբար իրեն հարգալից հեռավորության վրա է պահում ստեղծագործական փիլիսոփայությունից» (անդ):

<sup>4</sup> Կօվի Ս., Лидерство, основанное на принципах / Пер. с англ., М., “Альпина Бизнес букс”, 2008, с. 150.

<sup>5</sup> Դաֆտ Ր., Մենеджмент / Пер. с англ., СՊб., “Питер”, 2007, с. 36.

յացման, այսինքն՝ այդ գիտաճյուղի առաջին հարացույցի ձևավորման համար: Հարացույցի ձևավորման, ինչպես նաև փոփոխության հիմքում ընկած է նաև **հանրային պատվերը**: Կառավարման մասին գիտության ձևավորման հանրային պատվերը հասունացել էր XIX դարի վերջին<sup>6</sup>, և թեյլորյան դպրոցի գոյացմանը ավարտվեց մինչհարացուցային այդ փուլը<sup>7</sup>, հիմք դրվեց նոր գիտության, որը, բնականաբար, անցնելու էր հարացուցների հերթափոխնան երկարատև ընթացք ինչպես ներքին տրամաբանությամբ (նոր փաստերի կուտակում, հայեցակարգերի առաջադրում, օրինաչափությունների ձևակերպում), այնպես էլ արտաքին գործոնի՝ հանրային փոփոխված պատվերի ազդեցությամբ:

Կառավարաբանության **XXI դարի հարացույցի բովանդակության** գանացան շարադրանքներում նկատելի է գրեթե ընդհանրական մի միտում. նորը շարադրվում է որպես հնի հակադրույթ: Փիեթր Դրաքերը, օրինակ, քննարկելով մինչև XXI դարի սկիզբը կառավարաբանության զարգացման ընթացքը, առանձնացնում է «կառավարման կանխադրույթներից» (Management Assumptions) յոթ հինգ և դրանց հակադրում ութ նորը, որ բնորոշելու են XXI դարը: Այսպես, ըստ հին կանխադրույթի՝ «գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ կազմակերպության միայն մեկ ձիշտ կառուցվածք», այնինչ ըստ նորի՝ չկա նման միակ և ձիշտ ձև. «Ճիշտը այն կառուցվածքն է, որ համապատասխանում է կազմակերպության գործառույթներին»: Նույնկերպ, ըստ հին մոտեցման՝ «գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ մարդկանց կառավարելու միակ ձիշտ եղանակը (one right way to manage people)», մինչեւ նորը հրչակում է, թե չկա նման բան. «Մարդկանց արհասարակ պետք չէ «կառավարել», խնդիրը մարդկանց առաջնորդելն է, և նպատակն է այն է, որ արդյունավետորեն դրսևորվեն ամեն մի անհատի գիտելիքն ու կարողությունները»: Ըստ հին ըմբռնման՝ կառավարումը կենտրոնացած-ներփակված է կազմակերպության շրջանակներում, իսկ ըստ XXI դարի պատկերացումների՝ կառավարման խնդիրը միայն կազմակերպության ներքինը չէ, քանի որ «ամեն մի հաստատություն գոյություն ունի արտաքինի համար, և կառավարումն ինքն էլ գոյություն ունի հանուն հաստատության գործունեության արդյունքների ապահովման», «կառավարումը հաստատության այն օրգանն է, որը նրան ունակ է դարձնում արտադրանք տալու՝ լինի դա գործարարություն, եկեղեցի, համալսարան, հիվանդանոց, թե բռնության ենթարկված կանանց ապաստարան»<sup>8</sup>:

Ըստ Քարտեր Մաքնամարայի՝ XXI դարում «նոր հարացույցի» էությունը «փոփոխությունները կառավարելու» կառավարչական ունակության պահանջն է. «Փոփոխությունները կառավարել նշանակում է ոչ թե դրանք վերահսկել, այլ հարմարվել դրանց այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է և ուղղորդել այնտեղ, որտեղ դա հնարավոր է»<sup>9</sup>: Փոփոխություններին ձկունորեն հարմար-

<sup>6</sup> Հանգանանորեն տե՛ս Մենեջմենք / Յու. Սուվարյանի ընդհ. խմբ., Եր., «Տնտեսագետ», 2016:

<sup>7</sup> Կառավարաբանության մինչհարացուցային փուլի բնութագրումը տվել է Ֆ. Թեյլոր («Էնլոր Փ., Խայռայ օրգանիզացիա տրյա, Մ., 1924). անխնայողաբար և անարդյունավետ էր գործադրվում մարդու աշխատանքը, չկար արտադրության կազմակերպման գիտական հիմք, անեն ինչ արվում էր «աշքաշակով», չկար կառավարման հստակ համակարգ. եղած դեպքում էլ կառավարիչները կախման մեջ էին աշխատողներից («չկամությամբ աշխատանքը»):

<sup>8</sup> Drucker P.F., Management Challenges for the 21<sup>st</sup> Century, N.V.: Harper Business, 2001, p. 5 – 40.

<sup>9</sup> Drucker P.F., Classic Drucker: Essential Wisdom of Peter Drucker from the Pages of "Harvard Business Review", Boston, 2008.

<sup>9</sup> McNamara C., New Paradigm in Management // <http://managementhelp.org/management/paradigms.htm>

Վելն է շեշտադրում նաև խրայելցի հցիակ Աղիզեսը. «Նոր հարացույցից պահանջվում է, որ, նախ՝ հաշվի առնվի իրերի իրական դրությունը, երկրորդ՝ հնարավորություն ընձեռվի կարգավորելու դրանք»<sup>10</sup>:

Կառավարաբանության հարացույցի ուրվագծվող փոփոխություններն առավել ցայտուն կարելի է ներկայացնել այլուսակի օգնությամբ: Այդպես է վարչում, օրինակ, Մերիին ֆերզուտոնը<sup>11</sup>. Նրա այլուսակում հանդիպում են, մասնավորապես, նախկինի և նորի հակադրման հետկայալ օրինակները՝

Մարդիկ հարմարեցվում են աշխատանքին	Աշխատանքն է հարմարեցվում մարդկանց
Աշխատանքը և խաղը	Աշխատանքը և խաղը
սահմանաբաժանված են	փոխներքափանցում են
Ագրեսիվություն, մրցակցություն	Համագործակցություն
Պարտադրված նպատակներ,	Ողջունելի են ինքնուրույնությունը
որոշումները կայացվում են վերից վար	և համամասնակցությունը
Կայունության համար պայքար	Փոփոխության, գալիքի գգացողություն

Կառավարաբանության XXI դարի հարացույցի քննարկման կարևոր կողմերից է կառավարչի և առաջնորդի բնութագրերի համեմատությունը: Այստեղ նույնպես որոշ տեսաբաններ գերադասում են հակադրել հին հարացույցին բնորոշ՝ կառավարչի դերի շեշտադրությունը նոր մոտեցմանը, առաջնորդի դերի մասին նոր պատկերացումներին, որոնք պատշաճ են XXI դարի կառավարչական իրողությանը: Առաջնորդման նոր տեսություններից առանձնանում է «տրոհվող առաջնորդումը» (Shared Leadership), ըստ որի առաջնորդումը ոչ թե մեկուսի անհատի գործունեություն է, այլ մի ընդհանուր երևոյթ, միջանձնային հաղողութակցման տեսակ, որը բոլոր մասնակիցներին հնարավորություն է ընձեռում բացահայտելու այլոց ուղղորդելու սեփական կարողությունը: Փաստորեն, առաջնորդը ոչ թե մեկն է, այլ բոլորը միասին. «Որպես անհատներ՝ մենք մաս ենք կազմում առաջնորդման գործընթացի, և, միևնույն ժամանակ, ամեն մեկս մյուսից ձիրք ենք ստանում միմյանց առաջնորդելու»<sup>12</sup>: Այսօրինակ առաջնորդման առավելություններն են փոխադարձ վստահությունը, կապվածությունը, նվիրվածությունը, հոգատարությունը, միմյանց բարձր արժեքավորումը, ուժերի հանդեպ հավատը: Դրանք սովորաբար ավելի ցայտուն են դառնում, պայմանականորեն ասված՝ «հին» կամ «դասական» առաջնորդման հետ համեմատվելիս<sup>13</sup>:

Այս թեմային առնչվող ուշագրավ մի ձևակերպում ենք հանդիպում Զոյել Բարկերի «Մտածողության հարացույցները» գրքում. «Մենք ենք կառավարում և հարացույցի շրջանակներում, առաջնորդը մեկ հարացույցից ուղղորդում է դեպի մյուսը»<sup>14</sup>:

<sup>10</sup> **Адизес И.К.**, Идеальный руководитель: почему им нельзя стать и что из этого следует / Пер. с англ., М., “Альпина Паблишер”, 2014, с. 35.

<sup>11</sup> St'u Ferguson M., The New Paradigm: Emerging Strategic for Leadership and Organizational Change. N.Y., 1993:

<sup>12</sup> Doyle M.E., Smith M.K., Shared Leadership // [http://www.infed.org/leadership/shared\\_leadership.htm](http://www.infed.org/leadership/shared_leadership.htm)

<sup>13</sup> St'u Nemerowicz G., Rose E., Education for Leadership and Social Responsibility. London, 1997, էջ 16:

<sup>14</sup> **Баркер Дж.**, Парадигма мышления: как увидеть новое и преуспеть в меняющемся мире / Пер. с англ., М., “Альпина Бизнес Букс”, 2007, с. 135.

<b>Դասական առաջնորդում</b>	<b>Տրոհվող առաջնորդում</b>
Ածանցյալ է խմբի կամ աստիճանակարգման մեջ անձի գրաված դիրքից	Դրսերվում է ոչ այնքան անձանց դիրքում, որքան միջանձնային հաղորդակցման որակում
Առաջնորդումը արժեքավորվում է ըստ լուծված խնդիրների բնույթի	Առաջնորդումը արժեքավորվում է ըստ մարդկանց համատեղ աշխատանքի
Առաջնորդմերը լուծումներ են գտնում, պատասխաններ են տույնին	Բոլորն են ծգուում բարեկավել աշխատանքը, դարձնել առավել կատարյալ
Առաջնորդների և հետևողների միջև կան հստակ տարբերություններ՝ ըստ դերակատարման, հմտությունների և այլն	Բոլորը փոխկախման մեջ են՝ ակտիվորեն ներգրավված առաջնորդման գործընթացում
Հաղորդակցումը հաճախ է ձևայնացած	Հաղորդակցումը բացառիկ կարևոր է, շեշտադրվում է զրույցը
Կարող է հաճախ հիմնված լինել գաղտնապահության, պատրանքի և վճարումների վրա	Բարձր են գնահատվում ժողովրդավարական գործընթացները, անկեղծությունը և բարյականությունը. նպատակն ընդհանուրի բարիքն է

Արդ, հարկավոր է համաձայնել Մյուրեն Բաբի եզրակացությանը, թե հեղափոխական փոփոխությունները պահանջում են նոր սկզբունքներ, նոր մոտեցումներ, «անհնար է այլևս կառավարչական հմտությունները խարսխել 20-րդ դարի սկզբունքների վրա, որոնք սկիզբ են առնում տակավին արդյունաբերական հեղափոխության վաղ շրջանից»: Եվ խնդիրի լուծումը, ըստ հեղինակի, երկակի է՝ «մի կողմից՝ քննադատաբար վերլուծել անցյալ դարում գերիշխող կառավարչական հիմնավորոց ուղղափառությունը (long-standing managerial orthodoxy), մյուս կողմից՝ ուսումնասիրել ժամանակակից առաջավոր կազմակերպությունների փորձը»<sup>15</sup>: Եվ հենց այդպէս էլ արվում է, իհարկե, բազում տեսաբանների հետևողական աշխատանքով:

Տողերիս հեղինակն էլ, որպէս սեփական լումա XXI դարում ձևավորվող հարացույցի գծերի քննարկման մեջ, առաջարկում է «հաղթանակ – պարտություն» (win – lose) սկզբունքին «հաղթանակ – հաղթանակ» (win – win) սկզբունքի հակադրումը հավելել: Հիմնավորման համար նախապես վերիիշենք կառավարաբանության պատմությունը՝ չմոռանալով նաև բուն կառավարման՝ որպէս համատեղ աշխատող մարդկանց փոխազդեցության որոշակի տեսակի հույսունը, այն է՝ կառավարումն աշխատանքի կատարումն է այլոց միջցոցով: Ինչպէս հայտնի է, Ֆրեդերիկ Թեյլորի գահական կառավարման՝ հարացույցի հիմքում «տնտեսական մարդու» հայեցակարգն է, ըստ որի մարդն աշխատում է գերազանցապես տնտեսական վարձատրության համար, ի լրումն՝ իր շահը հետապնդելիս նոյնքան անվերապահորեն, ծայրահեղորեն անհատապաշտ է, եսական: Թեյլորը աշխատավայրում հաղորդակցումը դիտում էր որպէս «երկրորդային» նենգադրուի (սարուտաժ) տեսակ. բանվորները գլուխ են պահում, չեն ցանկանում լարված աշխատել, դրա համար էլ սկսում են զրուցել, ուստի հարկավոր է հնարավորինս սահմանափակել միջանձնային հաղորդակցումը: Իհարկե, Թեյլորը նաև խորհուրդ էր տալիս ծերնարկատիրոջը գրուցել ենթականների հետ, ուշադիր ունկնդրել, քննարկել նրանց կարծիքը<sup>16</sup>. առերևույթ՝ սա նման է հետագայում ձևավորված «մարդկային հարաբերությունների դպրոցի» ներկայացուցիչնե-

<sup>15</sup> Bubble M., Tendencies in evolution of 21<sup>st</sup> century management // Management, Vol. 20, 2015, p. 13.

<sup>16</sup> Տե՛ս Թեյլոր Փ. Ա., Научная организациия труда. М., 1924, էջ 272:

րի նույնաբնույթ դատողություններին, սակայն Թեյլորի համար դեկավար – Ենթակա այդօրինակ հաղորդակցումը լոկ «Քարեգործության տեսակ» էր, ոչ թե կառավարման միջոց: «Անձնական հաղորդակցում մեզ մոտ գրեթե չկա, – ավելի հստակ է ձևակերպում իր դիրքորոշումը Հենրի Ֆորդը: – Մարդիկ կատարում են իրենց աշխատանքը և գնում տուն. Վերջիվերջո՝ ֆարիկան սալոն չէ: Այդուհանդեռձ, – վերապահում է անում նա, – մենք ջանում ենք արդարացի վարվել, և թեպետ մեզանում առանձնապես տարածված չեն ձեռքսեղմումները (մենք հատկապես ազնվայրերի չեն, որ ընդունում ենք աշխատանքի), սակայն ձգուում ենք, որքան հնարավոր է, վերացնել թշնամական փոխհարաբերությունները»<sup>17</sup>:

Ինչպես հայտնի է, կառավարման հաջորդ՝ «մարդկային հարաբերությունների» դպրոցի ծևավորմամբ կառավարաբանության հարացույցի արմատական փոփոխությունն առնչվում է հատկապես միջանձնային հաղորդակցման գործոնի դերի վերագնահատմանը: Հիմնավորվում է մարդկանց համատեղ գործունեության կառավարման հենց այդ տարրը, այն է՝ ներխմբային փոխհարաբերությունների կարգավորման, համախմբվածության բարելավման անհրաժեշտությունը: Թեյլորյան «տնտեսական մարդու» հարացույցը փոխարինվում է «հոգեբանական մարդով»: Կառավարաբանության հետագա զարգացման ընթացքում «մարդկային հարաբերությունների» դպրոցին բնորոշ հոգեբանական ծայրահեղությունը շտկվեց, իսկ անցյալ դարի 70-ականների վերջին ասպարեզ եկավ «սոցիոլոգիական մարդու» հարացույցը, և կառավարման կենտրոն դարձավ «մարդկային կապիտալ»՝ աշխատողի ստեղծագործական ունակությունների առավելագույն բացահայտումն ու գործադրումը: Այդուհանդեռձ, միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման խնդիրները հետին պան չեն նահանջել: Կառավարման որևէ տեսաբանի, ո՞չ էլ կառավարչի հարկ չկա համոզելու, որ հնարավոր չէ ապահովել փոքրիշատե արդյունավետ գործունեություն՝ առանց ներկազմակերպական հաղորդակցման կարգավորման, բարոյահոգեբանական բարենպաստ մքնոլորտի, Ենթականների ինքնական ներգրավվածության:

Սրիվեն Քովին առանձնացնում է չորս հարացույց (սեփական հայեցակարգի շրջանակներում) և տպավորիչ ծևով ամփոփում. «Գիտական կառավարման հարացույցը նշանակում է՝ «Ինձ լավ ՎՃարեք»: Մարդկային հարաբերությունների հարացույցը Ենթադրում է՝ «Ինձ հետ լավ Վարվեք»: Մարդկային ռեսուրսների հարացույցն առաջարկում է՝ «Ինձ լավ օգտագործեք»: Ամբողջական մարդու<sup>18</sup> հարացույցը հրչակում է՝ «Եկեք քննարկենք կազմակերպության հեռանկարը և առաքելությունը, նապատակները և մեր դերերը: Ես էլ եմ ցանկանում զգալի ներդրում անել»»<sup>19</sup>:

Կառավարումը երկու կողմերի փոխհարաբերության տեսակ է, և եթե դրանք հականարտ դիրքերում են, ապա մեկը ձգտում է շահել՝ կամ բնավ չմտածելով մյուս կողմի շահերի մասին, կամ էլ ուղղակի վնասելով մյուսին: Մի կողմը պարտադրում է, մյուսը՝ ենթարկվում: Մի կողմը հաղթում է, մյուսը՝ պարտվում: Բանակցային գործընթացների կառավարման լեզվով՝ այստեղ գործում է «հաղթանակ – պարտություն» (կամ՝ «հաղթանակ – կորուստ») սկզբունքը: Գործարար հաղորդակցման գիտակ Ս. Քովին այդ սկզբունքը

<sup>17</sup> Փորդ Գ., Մоя жизнь, мои достижения. Ер., “Айастан”, 1990, с. 103.

<sup>18</sup> Ս. Քովիի առաջարկած եզրն է՝ «Whole-Person Paradigm»:

<sup>19</sup> Կովի Ս., Լидерство, основанное на принципах, с. 157.

միանգամայն տեղին է համարում՝ իբրև արդի հասարակության, մասնավորապես՝ բոլոր տեսակի բանակցությունների հիմնարար վարչելակերպ. «Եվ սա բխում է հասարակությանը բնորոշ սղության գաղափարախոսությունից, ըստ որի, եթե ինչ-որ մեկը շահում կամ ձեռքբերում է ունենում, ապա քեզ արդեն քիչ է մնում: Նպատակը, հետևաբար, այն է, որ ձեռք բերես ցանկացածդ, ինչը նշանակում է ձեռնաժության ենթարկել մեկ ուրիշին կամ գերազանցություն ստանալ նրա հանդեպ՝ հարկադրելով գնալու առավելագույն զիջումների»<sup>20</sup>:

Այս սկզբունքի գործառությանը կարող ենք հանդիպել մարդկանց համակեցության ամենատարբեր դրսևումներում: Օրինակ՝ այդպիսին կարող է լինել «ծնող – զավակ» փոխհարաբերությունը, եթե ամեն մի կողմը եսաբար ձգուում է միայն սեփական շահին, իր կամքը պարտադրում մյուսին՝ բնավ չհոգալով վերջինիս իրական շահերի մասին: Նույնը կարող ենք ասել «գնորդ – վաճառող» (վաճառողն անորակ կամ ժամկետանց ապրանք է «փաթաթում» գնորդի վզին. ինքը շահում է, գնորդը՝ տուժում), «հիվանդ – բժիշկ» (շահամոլ բժիշկը միտումնավոր կեղծ ախտորոշում է կայացնում՝ հիվանդից գումար շորթելու համար), «ղեկավար – ենթակա» (ինքնահավաքն ղեկավարը թերազնահատում, անտեսում, նսեմացնում է ենթակայի արժանիքները), «դասախոս – ուսանող» (դասախոսը միտումնավոր «կտրում է» գիտուն ուսանողին), «ավագ – կրտսեր» (բիրու ավագը կրտսերին վերածում է մանկավիկի) փոխհարաբերությունների վերաբերյալ: Այրուհանելով, հատկապես բանակցությունների ընթացքում է շատ ցայտուն կողմերի վարքագետի տարբերությունը՝ ըստ նրանց ընտրած հաղորդակցական ռազմավարության: Կողքից, չեզոք դիտողի կարգավիճակով, ոյլորին համոզվում ենք, թե ինչպես մի կողմը, իսկ երբեմն երկուսն էլ, ձգուում են միակողմանի հաղթանակի՝ անտեսելով կամ ուղղակի ոտնահարելով դիմացինի շահերը: Այս առումով կարող է գոյություն ունենալ գործարար փոխազդեցության երեք տեսակ՝ ա. մի կողմը հաղթում է, մյուսը՝ պարտվում, թ. երկու կողմն էլ պարտվում են (որպես առաջին տեսակի անխուսափելի հետևանք), գ. երկու կողմն էլ հաղթում են: Թե որն է փաստացի գործադրվում, կախված է բազում հանգամանքներից՝ կողմերի նպատակներից, տօնորինած լծակներից, դաշտանած վարրականությունից, ժամանակային սահմանափակումից և այլն:

«Հաղթանակ – պարտություն» սկզբունքը կարող է իրեն արդարացնել լոկ մեկանգանց հաղորդակցման դեպքում, բախումների հանգուցալուժման այն տեսակի պայմաններում, երբ մի կողմը բացարձակ առավելություն ունի մյուսի հանդեպ և մտադիր չէ հետազայում դրա հետ որևէ առնչություն ունենալ: Հասկանալի է, որ նմանօրինակ հաղորդակցումը չի վերաբերում միևնույն կազմակերպությունում գործող մարդկանց և խմբերին. Եթե անգամ մի պահ նրանց շահերը բախվում են, և գայթակղիչ հնարավորություն է ստեղծվում պարտության մատնելու մյուս կողմին, ապա երկարատև ժամանակահատվածում «հաղթող» կողմն էլ է տուժում, և ոչ միայն այն պատճառով, որ պարտվածը ծգութում է փոխվրեժի, այլև այն պատճառով, որ կողմերի շահերը վերջիվերջո շաղկապված են կազմակերպության արդյունավետ գործառության և անխոչընդուն զարգացման հրամայականության: Այնպես որ, միակողմանի հաղթանակի ծգութումը գործարար կյանքում իրեն չի արդարացնում և, որպես կանոն, հանգեցնում է երկուստեր պարտության: Դիցուք՝ «զնորդ – վաճա-

<sup>20</sup> Covey S.R., The 8<sup>th</sup> Habit. From Effectiveness to Greatness. New York: Free Press, 2005, p. 172.

ռող» հաղորդակցման օրինակը. ինքնին հասկանալի է, որ անորակ ապրանք վաճառողը շահում է միայն տվյալ պահին, սակայն առհավետ կորցնում է գնորդին և երկարատև հեռանկարում պարտվում: Հատկանշական է, որ առևտորի «հին» գործելակերպի դեպքում, ըստ Վիկտոր Շեյնովի, «վաճառողն անմիջաբար կենտրոնացած է այն բանի վրա, որ գնորդին հարկադրի գնել. այս պարագայում առք ու վաճառքը հիշեցնում է ռազմանավերի միջև փոխսհրազարկեր»<sup>21</sup>: Նրա հորդորն է. «Մի վերաբերվեք վաճառքի ընթացքին կողմերի «ով՝ ում» անխուսափելի առձակատման դիրքերից»<sup>22</sup>: Սա, փաստորեն, մեր նշած «հաղթանակ – պարտություն» մոտեցումն է: Եվ, իհարկե, ցանկալի ռազմավարությունն է՝ հաղթահարել սեփական եսականությունը, «մտածել ոչ միայն սեփական օգուտի, այլ նաև գնորդի մասին», «վաճառել միայն այն ապրանքը, որից հաճախորդը գործ է լինելու»<sup>23</sup>: Հատկապես ծայրահեղ եսականությունն է տարբերում ավանդական «տնտեսական մարդու» հայեցակարգը դրա ժամանակակից ըմբռնումից.<sup>24</sup> Ծգտելով սեփական առավելագույն օգուտի ապահովմանը՝ «տնտեսական մարդը» իրեն գիտակցում է նաև որպես հանրության անդամ, փոխանակային հարաբերությունների մասնակից, ուստիև կարող ենք ասել՝ վարդում է «խելամիտ եսականության» ոգով:

«Հաղթանակ – հաղթանակ» սկզբունքի շատ բնութագրումներ կան: Մեզ լավագույնն է թվում Ս. Քովիի ծևակերպումը. ««Հաղթանակ – հաղթանակ» մտածելակերպը դատողությունների և դիրքորոշումների այն շրջանակն է, որտեղ փոխազդեցության բոլոր տեսակները միտված են փոխադարձ վստահության և փոխադարձ օգուտի ապահովմանը: Այստեղ մտածում են ավելի շատ բարենպաստ հնարավորությունների և առատության, քան թե սղության և թշնամական մրցակցության լեզվով: Սա «հաղթանակ – պարտություն» եսական մտածողությունը չէ, ոչ էլ նման է «պարտություն – հաղթանակ» ինքնազդությանը: Սա «մենք»-ի, այլ ոչ թե «ես»-ի լեզվում է»»<sup>25</sup>: Եվ, իսկապես, առանց մյուս կողմի մասին մտածելու, շահերի ընդհանրության հանգամանքը հաշվի առնելու, մենք լոկ ժամանակավոր հաղթանակ ենք տանում, բայց հեռանկարում անխուսափելիորն կորստյան ենք դատապարտվում: Ինչպես հայց առածանին է զգուշացնում՝ «Առ ու տուր են ասել, ոչ թե՝ առ ու կուլ»:

Ուրվագծենք «հաղթանակ – հաղթանակ» սկզբունքի կիրառության հիմնական պայմանները: Քանի որ կառավարման բուն էլուրյունը կողմերի փոխազդեցության տեսակի, գործունեության միջնորդավորման, կառավարչի նպատակի իրականացումն է ենթակայի կատարողական աշխատանքի միջոցով, ապա անհրաժեշտ է, որ, ամենից առաջ, գործադրված կառավարչական ազդեցությունը համահունչ լինի ենթակայի ներաշխարհին, աշխատանքի հանդեպ վերաբերմունքին, արժեքային համակարգին, կամովին գործելու ցանկությանը: Հաղորդակցական իրավիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև երկուստեք դրանց անձնային ընկալումներն են որոշում, թե հատկապես կառավարչի գործադրած ո՞ր լծակն է տվյալ ենթակայի (ենթակաների) համար առավել արդյունավետը՝ իրամանը, վարձատրությունը, համոզումը, հոգեբանական ձեռնածությունը, ինքնուրույն գործելու հնարա-

<sup>21</sup> Шеинов В.П., Искусство торговли. М., “ACT”, 2010, с. 5.

<sup>22</sup> Անդ, էջ 87:

<sup>23</sup> Անդ, էջ 7, 8:

<sup>24</sup> Ст'ю Бункина М.К., Семёнов А.М., Экономический человек. М., “Дело”, 2000:

<sup>25</sup> Covey S.R., The 8<sup>th</sup> Habit, p. 152 –153.

Վորությո՞ւնը, ծառայողական առաջխաղացման հեռանկարը, պատժի սպառնալի՞քը, թե՞ մեկ այլ միջոց:

Անտուան դը Սենտ Էքյուպերիի փոքրիկ իշխանը, երբ այցելում է «ամեն ինչ» կառավարող թագավորի մոլորակ և խնդրում, որպես ապացուց այդպիսի զորության, իրամայել արևին մայր մտնելու, թագավորը պատասխանում է (թերթելով օրացուցը), թե նման իրաման ինքն այսօր կարող է տալ միայն ժամը յոթն անց քառասուն րոպեինը հետևյալն է.

- Եթե ես մի որևէ գեներալի իրամայեմ, որ թիթերի նման ծաղկից ծաղիկ թռչի կամ ոլբերգություն գրի, կամ էլ ճայ դառնա, իսկ գեներալը իրամանը չկատարի, ո՞վ կինի մեղավորը, նա՝, թե ես:
- Դուք, ձերդ մեծություն,— առանց տատանվելու պատասխանեց Փոքրիկ իշխանը:
- Միանգամայն ճիշտ է,— հաստատեց թագավորը:— Ամեն մեկից պետք է խնդրել այն, ինչ նա կարող է տալ: Իշխանությունը նախ և առաջ պետք է խեղացի լինի: Եթե դու քո ժողովրդին իրամայես ծովը նետվել, նա հեղափոխություն կանի: Ես իրավունք ունեմ հնագանդություն պահանջելու, որովհետև իմ իրամաները խեղացի են<sup>26</sup>:

Հաղթում է և իրամայող կողմը, քանի որ կատարվում է նրա իրամանը, և կատարողը, քանի որ կատարում է ինեց այն, ինչը ցանկանում է: Պարտադրանքի դեպքում իրամայող կողմը պարտվում է (ժողովուրդը հեղափոխություն է անում), բայց մյուս կողմի հաղթանակն էլ երկար չի տևում՝ հեղափոխությանը վաղ թե ուշ հաջորդում է հակահեղափոխությունը: Դարձյալ վերիիշենք հայոց առածները. «Ճանը գորով որ որսի տանեն, շուր կգա տիրոջը կվծի»: Այսինքն՝ վերստին «հաղթանակ – պարտություն» սկզբունքն անխուսակելիորեն հանգեցնում է «պարտություն – պարտություն» իրողությանը. կողմերը թուլացնում են միմյանց, շարունակական բախմամբ՝ երկիրն ավերվում է:

Քննարկվող սկզբունքի փաստացի կիրառումը պահանջում է, բնականաբար, փոխադարձ ընթացնան հնարավորություն: Եթե մարդիկ խոսում են «տարբեր լեզվով», ինքնին անխուսափելի են թյուրիմացությունները: Շատ օգտակար է Զոյել Բարկերի կարծիքը. «Կունն առաջարկում է այլ հարացուցի տեր գրուցակին վերաբերվել որպես մեկին, որն օտար լեզվով է խոսում: Մինչև դուք չսովորեք այդ լեզուն, չեք հասնի հաջող հաղորդակցման: Կարծում եմ՝ հրաշալի խորհուրդ է: Ես հանգել եմ հետևյալ եզրակացության. երբ տարածայնություններ են առաջանում, հարկավոր է լոել և լսել: Վաղ թե ուշ գրուցակիցը կրացահայտի իր հարացուցը: Դա հասկանալով՝ ես կհասկանամ նաև, թե նա ինչ է ասում: Հնարավոր է, որ ես նախկինի պես մնամ այլ կարծիքի, բայց գոնե կիմանամ, թե ինչու»<sup>27</sup>:

Իհարկե, այս «լրելու և լսելու», այսինքն՝ դիմացինին հասկանալու պատրաստակամությունը առաջինը կառավարիչը պիտի դրսենի: Եվ հարկ է ոչ թե ընդամենը քաղաքավարի ունկնդրել կամ տպավորություն ստեղծել, թե համակ ուշադրությամբ լսում ես ենթակայիդ (նման խորհուրդներ կան արևմտյան որոշ ձեռնարկներում, այսպես կոչված՝ «գործունյա ունկնդրման» (active listening) միջոցների շարքում), այլ նաև հասկանալ, թե ինչու է նա ասում հատկապես այս կամ այն բանը: Հենց կառավարիչը պիտի որպես

<sup>26</sup>Տե՛ս Ա. դը Սենտ Էքյուպերի, Փոքրիկ իշխանը, Եր.: «Լուս», 1985, էջ 33:  
<sup>27</sup> Բարկեր Ջկ., Պարադիգմա մատուցում, ս. 131.

օրինակ ծառայի ըմբռնելու իր ունակությամբ, և դա ոչ թե վերացական ինչ-որ հատկություն է, լոկ բարի ցանկություն, այլ, վստահաբար ասենք՝ կառավարչի մասնագիտական կարևոր հատկություններից մեկը: Եվ նճան կառավարիչը, անտարակույս, հաղթում է, քանի որ կարողանում է ձանաչել իր ենթականներին և լավագույնս գործադրել նրանց կարողությունները: «Հաղթանակ» է տոնում, բնականաբար, նաև ենթական, քանի որ, նախ՝ իր առջև տեսնում է փոխադարձ ըմբռնման տրամադրված դեկավարի, երկրորդ՝ գնահատվում է ըստ արժանվույն:

Այս առումով, մի հետաքրքիր դիտարկում ենք հանդիպում նորգելանդացի Նանեթ Մոնինի «Կառավարման տեսություն» գրքում. համակարգված վերլուծելով կառավարաբանության դասականների՝ Ֆ. Թեյլորի, Փ. Դրաքենի, Հ. Սինգրեյփի աշխատությունները, նա արձանագրում է. «Դրանք օգտակար են, հաճախ նպաստում են բարգավաճմանը, մեծապես պիտանի են շատ շատերի համար, բայց դրանցում ենթականները խոսում են կառավարիչների ձայնով: Մենք չենք լսում ենթականների ձայնը. կառավարիչների վարվելակերպում ունկնդրողի դեր նախատեսված չէ»<sup>28</sup>:

Մինչդեռ «հաղթանակ – հաղթանակ» սկզբունքն անհնարին է առանց կողմերի միջև երկխոսության ապահովման. Եթե մարդիկ տրամադրված չեն միմյանց ունկնդրելու, ծգուում են լոկ սեփական կարծիքն արտահայտել, առավել և պարտադրել դիմացինին, ապա, ամենայն հավանականությամբ, նրանց երկուստեք պարտություն է սպասում: Պատահական չէ, որ համաշխարհայնացման (զլրբալացման) պայմաններում «հաղորդակցման նոր մշակույթի» կարևորությունը հիմնավորող հեղինակները հորդորում են հանուն «միջանձնային կյանքի և աշխատանքային գործառույթների արդյունավետ կատարման» հանրային կյանքում սերմանել միմյանց վարվելակերպին և լեզվին հարմարվելու կարողությունը<sup>29</sup>: Նույնկերպ՝ մարդկային փոխհարաբերությունների «նոր գիտության» իր հիմնավորման հիմքում Դեյվիդ Գոլեմանը դնում է «երկկողմ ունկնդրման» կարևորությունը: Վաստ ունկնդրման դեպքում, նշում է նա, մեր ասելիքը չի փոխվում ըստ գրուցակցի արձագանքման, այլ սոսկ արտացոլում է մեր սեփական զգացմունքը: Մինչդեռ խնդիրը դիմացինին, նրա հոգեվիճակին հարմարվելն է (attunement). «Եթե ես զավթում եմ Ձեզ հետ մեր գրույցը, ես բավարարում եմ իմ պահանջմունքները՝ չհետաքրքրվելով ձերիններով: Շիտակ ունկնդրումը, ընդհակառակը, ինձնից պահանջում է հարմարվել, համահունչ լինել ձեր զգացումներին, հնարավորություն տալ Ձեզ արտահայտվելու, իսկ խոսակցությանը՝ ընթանալու մեր որոշած հիւնով: Երկկողմ ունկնդրումը երկխոսությունը դարձնում է փոխադարձ, երբ ամեն կողմն իր ասածը կարգավորում է ըստ մյուսների պատասխանների և զգացմունքների»<sup>30</sup>.

Քննարկվող սկզբունքի հաջող գործադրման հաջորդ պայմանը կողմերի՝ փոխադարձ զիջման տրամադրվածությունն է: Միջանձնային փոխհարաբերությունների բնականոն կարգավորման խոչընդոտմերից է զիջումը որպես թուլություն ընկալելու հոգեբանությունը: Մինչդեռ խոսքը ոչ թե միակողմանի զիջման մասին է, այլ հատկապես փոխադարձ զիջման, որը, կարելի է ասել,

<sup>28</sup> Monin N., Management Theory, New York: Routledge, 2004, p. 167.

<sup>29</sup> St'u Rethinking communication: Keywords in communication research / Ed. by S. Allan. Cresskill (NJ): Hampton Press, 2010, էջ 2:

<sup>30</sup> Goleman D., Social Intelligence: The New Science of Human Relationships. New York, 2007, p. 86.

առաջին քայլն է առձակատումից հնարավոր համագործակցության անցնելու, իսկ առաջին քայլը միշտ էլ ուժեղ կողմն է անում: Այդ կողմը, փոքր-ինչ զիջում կատարելով (կամ դրա առաջարկն անելով) և այդկերպ ուրվագծելով փոխհարաբերությունների ժամանակավոր կարգավորման ինչ-որ տարբերակ, մյուս կողմին հրավիրում է նոյնաբնույթ քայլ անելու: Փոխզիջումը դիտարկվում է որպես միջանձնային և գործարար բախումների կարգավորնան արդյունավետ միջոց, բայց չնոռանանք, որ դա, թերևս, առավել կարևոր դեր ունի ապակառուցողական բախումներից խուսափելու առումով: Փոխզիջնան առաջարկը հարգանքի և բարյացակամության ցուցադրում է մյուս կողմի հանդեպ, նաև գործակցելու պատրաստականություն՝ համատեղ լուծելու կողմերի առջև ծառացած խնդիրը (համատեղ պարզելու բախնան պատճառ դարձած երևույթը, ճշտելու դիրքորոշումների միջև հնարավոր ընդհանրությունը, որոշ ժամանակով դադար տալու և այլն):

Փոխզիջնանը պատրաստակամ կառավարիչը, առավել քան սեփական անսխալկանության անսասան հավատացողը, ընդունակ է նաև «հաղթանակ – պարտություն» ոճով սկսված գործարար գրույցը կամ բանակցությունները վերափոխելու, ուղղելու ցանկալի՝ «հաղթանակ – հաղթանակ» ընթացքի հունով: Սա նշանակում է՝ կանխարգելել ապակառուցողական բախնան ծագումը կամ էլ մեղմել արդեն գոյացած բախնան ընթացքը և, առհասարակ, գործարար հաղթակցման բոլոր իրավիճակներում պահովել ստեղծագործական, հարգալից, արգասաբեր մթնոլորտ: Սա նշանակում է նաև ունակ լինել վեճը վերափոխելու վիճաբանության, վերջինս էլ՝ բանավեճի<sup>31</sup>: Անզան ինչ-որ հարցում կորուստ կրելով՝ առաջինը զիջման գնացող և այդկերպ աշխատակիցներին փոխզիջնան վարվելակերպի օրինակ ցույց տվող կառավարիչը, վերջիվերջո, շահում է, քանի որ առարկայորեն ցույց է տալիս, որ իր համար առավել կարևոր են ոչ թե սեփական դիրքը շեշտելը կամ նկրտումներն ի ցույց դնելը, այլ երկրորդ կողմի հետ երկրութեք շահավետ երկարատև փոխհարաբերությունները, արդյունավետ համատեղ աշխատանքը:

Ինքնին հասկանալի է, որ «հաղթանակ – հաղթանակ» սկզբունքի ոգով հնարավոր է գործել միայն փոխադարձ Վստահության պայմաններում: Ծահամիտման բրիտանացի առաջատար տեսաբաններ Շեյլա Ռիչին և Փիթեր Մարտինը եզրակացնում են. «Քանի որ Վստահությունը գոյանում է, ամենից առաջ, որպես երկարատև փոխհարաբերությունների արդյունք, հարկավոր է կազմակերպությունում ստեղծել Վստահություն ծևակղորդ մշակույթ, այսինքն՝ մի միջավայր, որտեղ աշխատակցի խոսքը նրա պարտականությունն է. եթե աշխատակիցը չի կարողանում կատարել այն, ինչ խոստացել է, ապա անհապատ նախազգուշացնում է նրանց, ում խոստում է տվել, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան այլընտրանքային լուծում գտնելու: Ավելի ստույգ ասած՝ հարկավոր է առավել դրական կազմակերպական մշակույթ, որի պարագայում աշխատակիցը հարկադրված չլինի ասելու. «Այո՛, ես կանեմ դա», եթե իրականում հասկանում է, որ պարտավոր է ասել. «Ո՛չ, ես դա չեմ կարող անել», կամ՝ «Ես չեմ կարող դա հիմա անել»: Մարդիկ ասում են «այո՛», թեպետ հարկ էր «ոչ» ասել, քանի որ զգուշանում են որպես համագործակցության անընդունակներ ընկալվելուց»<sup>32</sup>:

<sup>31</sup> Հանգամանորեն տե՛ս Վ. Միրզոյան, Վիճարվեստ, էությունը և մի քանի սկզբունք, «Բանքեր ՀՊՏՀ», 2012, թ. 3:

<sup>32</sup> Ռիչի Ռ., Մարտին Պ., Управление мотивацией / Пер. с англ., М., 2004, с. 94.

Նկատենք, որ այստեղ առնչությունը երկպողմանի է, այսինքն՝ ինչպես ներկազմակերպական վստահության մթնոլորտն է պայման ստեղծում երկուստեք հաղթանակի տրամադրվելու, այդպես էլ այս ոգով գործելը, որպես կառավարչի հիմնական հմտություններից մեկը, փոխադարձ հարգանքի և համաձայնության է հանգեցնում<sup>33</sup>: Փոխադարձ վստահությունն է կողմերին ապահովում փոխադարձ հաղթանակ, քանի որ այսկերպ է հնարավոր դաշնում իրականացնել «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում» կառավարչական հրամայականը: Կարող ենք ասել, որ կառավարիչը «Ճիշտ տեղում» է, եթե ունակ է հստակ ըմբռնելու և գնահատելու ամեն մի ենթակայի կարողությունները, ապահովելու ամեն մեկին հանապատասխան աշխատանքով, իսկ, դիցուք, ենթակայի ձախողման պարագայում ուղղորդվելու մեկ այլ կառավարչական խորհրդով՝ «Չկան անընդունակ մարդիկ, այլ կան այնպիսիները, ովքեր իրենց գործով չեն օքաղվում» (այլ կերպ ասած՝ ձախողվածին ոչ թե պետք է մերժել, այլ մեկ ուրիշ, ավելի համապատասխան աշխատանք հանձնարարել):

Փոխադարձ վստահությունն է հատկապես ապահովում կողմերի առավել արդյունավետ փոխադարձ ազդեցություն: Եթե դեկավարը վստահում է իր ենթակային, նրա մասնագիտական կարողություններին, հավատում է դրական դիրքորոշմանը և ակնկալում է լավագույն կատարում, ապա հենց նաև վարքագիծ էլ ստանում է ի տրիստուր: Այլ կերպ ասած՝ մի կողմի ազդեցության արձագանքը մյուսի վրա նույնն է: Հենց դա է ծևակերպել Զ. Լիվինգսթոնը, որ տարիներ առաջ շրջանառության մեջ է դրել, այսպես կոչված՝ «Պիգմալիոնի ազդեցություն» հասկացությունը. «Թե՛ խանդավառությունը և թե՛ հիասթափությունը վարակիչ են»<sup>34</sup>: Ղեկավար – ենթակա փոխագիտեցության առավել հանգամանալից բնութագրումը հետևյալն է. «Կառավարիչների ակնկալիքները ենթականերից և համապատասխան վերաբերնունքը մեծավ մասամբ պայմանավորում են վերջիններիս վարքագիծը և առաջընթացը: Գերազանց կառավարչի լավագույն հատկությունը ենթակաների շրջանում բարձր ակնկալիքների մթնոլորտ ստեղծելն է, որին նրանք արձագանքում են: Պակաս արդյունավետությամբ գործող կառավարիչը սեփական վարվելակերպին բնորոշ ակնկալիքներ ունի, ինչով էլ վնասում է ենթակաների արդյունավետ աշխատանքին: Որպես կանոն՝ ենթակաները լավագույնս պատկերացնում են, թե ինչ են ակնկալում իրենցից»<sup>35</sup>:

Չանտեսենք նաև կառավարման սուբյեկտ – կառավարման օբյեկտ փոխարաբերության բնույթը. նկատի ունենք փոխադարձ ազդեցության հանգամանքը, ինչից բխում է, որ նոյն այդ «Պիգմալիոնի ազդեցությունը» գործում է նաև հակառակ ուղղությամբ: Ինչպես առհասարակ մարդկային տառատեսակ հարաբերություններում, կառավարման մեջ ևս ամեն ինչ փոխադարձ է: Չէ՞ որ ենթականերն ել իրենց ակնկալիքներն ունեն դեկավարից և, վերջիվերջո, ըստ այդմ հարմարեցնում են սեփական վարքագիծը, դեկավարի և ամբողջ կազմակերպության հանդեպ ծևավորում են իրենց դիրքորո-

<sup>33</sup> Ste'u Kovи C., Лидерство, основанное на принципах / Пер. с англ., М.: “Альпина Бизнес Букс”, 2008, էջ 246: Грин Р., 48 законов власти / Пер. с англ., М., 2002, էջ 652: Шейнов В., Искусство управлять людьми. М., ACT, 2008, էջ 152 – 162: Goleman D., Social Intelligence: The New Science of Human Relationships. New York, 2007, էջ 277 – 279:

<sup>34</sup> Livingston J.S., Pygmalion in Management // Harvard Business Review, September-October 1988, p. 3.

<sup>35</sup> Անդ, էջ 4:

շումը: Մասնավորապես, ինքնին հասկանալի է, թե որքան ավելի պատրաստակամ և արդյունավետ են գործում այն ենթակաները, որոնք լիովին համոզված են, որ իրենց դեկավարը իր տեղում է, գիտե ամեն մեկի արժանիքները, ցանկանում և կարողանում է յուրաքանչյուրին գնահատել ըստ արժանվույն:

Այս «Պիզմավիոնի ազդեցության» հանգամանքը մեծ տեղ է գրավում XXI դարի կառավարչի վճռորոշ հատկության, այն է՝ ոչ միայն վարչարար, կազմակերպիչ, վերահսկիչ, այլև մարդկանց առաջնորդ լինելու առումով: «Ծիտակ առաջնորդը, – նկատում է ամերիկացի առաջատար տեսաբաններից Ռութեն Բենհամը, – իր ենթակաների մեջ հակված է տեսմելու նրանց լավագույն կողմը: Առաջնորդը գիտե, որ մարդիկ փոխվում են, զարգանում: Եթե դուք նրանցից մեծ ակնկալիքներ ունեք, նրանք կարդարացնեն դրանք»<sup>36</sup>: Իհարկե, նույն իեղինակն արդարացիորեն ավելացնում է, որ հարկավոր է նաև իրատես լինել, իր լեզվով ասած՝ «ձգել, բայց չկտրել» (stretch, don't strain), քանի որ ամեն ինչ չափի մեջ պիտի լինի: Չափազանցված ակնկալիքները, չիմնավորված պահանջները այլ բան չեն, փաստորեն, քան «ձիշտ մարդ՝ ձիշտ տեղում» իմաստուն սկզբունքի խախտման տեսակներից մեկը: Իսկ նման խախտումից գերծ լինելու, «հաղթանակ – հաղթանակ» սկզբունքը «հաղթանակ – պարտության» վերածելուց խուսափելու հիմնական պայմանը փոխադարձ ընթանան և վստահության լիակատար ապահովումն է: Այդ դեպքում միայն փոխադարձ ակնկալիքները կլինեն միանգամայն հիմնավոր և արդարացի:

Այսախով՝ «հաղթանակ – հաղթանակ» սկզբունքի գործադրման այս հիմնական պայմանները, կարծում ենք, անհրաժեշտ են նաև XXI դարի կառավարաբանության թվարկված մյուս բնութագծերի փաստացի մարմնավորման համար: Իսկապես, երկուստեք հաղթանակի տրամադրվածությամբ է միայն հնարավոր կազմակերպության ներսում արմատավորել ընդհանուր նպատակի զգացողություն, առավելագույնս նույնացնել կազմակերպության և անհատի շահերն ու ակնկալիքները, մղել աշխատակազմի բոլոր անդամներին ստեղծագործական համամասնակցության, ապահովել աշխատանքի բնույթի և աշխատողի անհատական առանձնահատկությունների ներդաշնակություն, ինքնուրույնություն և նախաձեռնողականություն ծավալելու ասպարեզ և հնարավորություն, փոփոխություններին հարմարվելու ձկումություն:

Հավելենք, որ բոլոր այս դատողությունները, իհարկե, վերաբերում են կառավարման մասին գիտությանն առհասարակ, առանց ազգամշակութային առանձնահատկությունների հաշվառման: Իրականում վերջիններս առկա են նշված գրեթե բոլոր դատողություններում՝ սպողված: Բանն այն է, որ կառավարաբանությունն ավանդաբար ամերիկյան «արտադրանք» է, առաջատար տեսաբաններն ամերիկացի հեղինակներ են, այնպես որ, առերևոյթ վերագրային թվացող հարցադրումները հիմնականում կառուցվում են ըստ միջին ամերիկացուն բնորոշ վարքագի: Մինչդեռ XX դարի վերջը նշանավորվեց ազգային մենեջմենթների յուրատեսակ շքերթով. ծավալուն գրականություն կա՝ նվիրված ճապոնական, չինական, հնդկական, սկանդինավյան, հոլանդական և կառավարման շատ այլ համակարգերի վերլուծությանը: Սա առանձին քննարկման առարկա է, նշենք միայն երկու հանգամանք: Նախ՝ հայկական կառավարաբանությունը ևս կայացման փուլում է, եթե հաշվի առնենք, որ իրատարակվում են հայերեն բնագիր աշխատություններ, որտեղ, ընդ-

<sup>36</sup> Bennis W., On Becoming a Leader. New York: Bacs Books, 2009, p. 194.

հանուր (ամերիկյան) մենեջմենթի հայկականացման հետ միաժամանակ, հիմնավորվում են զուտ հայկական վարվելակերպի առանձնահատկություններն արտացոլող հարցադրումներ, մասնավորապես՝ արդիականության ոսպնյակով դիտարկվում և արժեքավորվում է հայ կառավարչական մտքի պատմությունը: Երկրորդն այն է, որ կառավարաբանության ազգամշակութային կողմից շեշտադրումը, շնորհիվ մերոդաբանական, աշխարհայացքային բնույթի հետազոտությունների առատացման, հաստատապես դառնալու է XXI դարի կառավարաբանության հարացույցի անկապտելի մասը:

**ВАЛЕРИЙ МИРЗОЯН**

Профессор кафедры „Менеджмента“ АГЭУ,  
доктор философских наук

**Принцип “победа – победа” в парадигме менеджмента XXI века.** – Наука как постоянно развивающаяся система знаний проходит через смену определённых парадигм. В статье анализируются некоторые черты парадигмы менеджмента XXI века, отмеченные рядом теоретиков, затем обосновывается важность добавления основных характеристик парадигмы принципом “победа – победа”. Предлагаются также основные условия успешной реализации данного принципа, в частности, необходимость обеспечения субъектом управления адекватной мотивации у объекта управления – исполнителя, атмосферы взаимного доверия между ними, готовности идти на разумный компромисс.

**Ключевые слова:** научная революция, парадигма менеджмента XXI века, принцип “победа – победа”, разумный компромисс, адекватная мотивация, взаимное доверие.

JEL: A11, M14, Z19

**VALERI MIRZOYAN**

Professor at the Chair of „Management“ at ASUE,  
Doctor of Philosophy

**The «Win – Win» Principle in the 21st Century Management Paradigm.** – Science as a system of permanently developing knowledge transforms from one paradigm to another. The article discusses the XXI century management paradigm features, which were already analysed by preceding theorists. The author underlines the importance of the «Win – Win» principle and states some conditions for its effective application. In particular, it is necessary, that managers use adequate motivation for employees, create an atmosphere of mutual trust between two sides. There must also be readiness for mutual concessions, effective interaction, aspiration for reciprocal understanding, etc.

**Key words:** scientific revolution, 21st century management paradigm, «Win–Win» principle, adequate motivation, reasonable, atmosphere of trust, compromise.

JEL: A11, M14, Z19